



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի հունվարի 29-ի N 24-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետարգել համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 13-ի N 178 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ **Ռազմիկ Հակոբյանին** 2019 թվականի օգոստոսի 22-ին, մեկ օրով գործուղել գյուղ Գետարգել՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության *արեսուսվորման* հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ **Ռազմիկ Հակոբյանին** գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2019 թվականի օգոստոսի 15

ք. Հրազդան

N 143-Ա

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

